ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.10.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/206

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Տեխնոսնաբ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Տեխնոսնաբ» ՍՊԸ-ի տնօրեն՝ Գ. Աթոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով գնանշման հարցում, մետաղների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13601-2020 գրությամբ «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 02.09.2020թ.-ի թիվ Ե/40/1608-20 գրության հիման վրա, 09.09.2020թ.-ին «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին (Գ. Ներսիսյանին) գործը մակագրվել է 09.09.2020թ.-ին:

Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարի 14.09.2020թ.-ի թիվ 255-Ա Բողոքներ քննող անձ՝ Գ. Ներսիսյանին 2020-2021թ.-երի աշխատանքային տարվա ամենամյա արձակուրդ տրամադրելու մասին հրամանը, ընթացակարգի քննությունը 15.09.2020թ.-ին փոխանցվել է Բողոքներ քննող անձ Լ. Օհանյանին:

17.09.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/206 համարի ծածկագիրը:

25.09.2020թ.-ին, 08.10.2020թ.-ին և 16.10.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 08.10.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 16.10.2020թ.-ին:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի 02.09.2020թ.-ի թիվ Ե/40/1608-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) սեփական կարիքների համար մետաղների ձեռք բերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով գնման ընթացակարգը, որին ի թիվս մյուս մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Տեխնոսնաբ» ՍՊԸ: Մասնակցության հայտի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Տեխնոսնաբ» ՍՊԸ մասնակցության հայտի հավելված 1.1-ի տեխնիկական բնութագրի առաջին չափաբաժնում ներկայացված պարամետրերը չեն համապատասխանում ի սկզբանե հրավերով պահանջված պարամետրերին, հետևաբար կիրառելի չեն «ՀԱԷԿ» ՓԲի կարիքների համար: Գնահատող հանձնաժողովի 24.08.2020թ. թիվ 2.3 որոշմամբ նիստը

կասեցվել է և «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ին առաջարկվել 1 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել շտկված տարբերակ: Սահմանված ժամկետում «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ի կողմից շտկման արդյունքում հավելված 1-1-ից ամբողջովին հանվել է առաջին չափաբաժինը: Գնահատող հանձնաժողովի առ 27.08.2020թ.-ի թիվ 2.4 որոշմամբ «Տեխնոսնաբ» ՍՊԸ մասնակցության հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 45-րդ կետի համաձայն Ձեր դիտարկմանն եմ ներկայացնում «Տեխնոսնաբ» ՍՊԸ կողմից գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների խախտումն հիմնավորող փաստաթղթերը:»:

Պատվիրատուն 24.09.2020թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետրյալը.

««Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) սեփական կարիքների համար մետաղների ձեռք բերման նպատակով հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով գնման ընթացակարգին ի թիվս մյուս մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ն, որի մերժման հիմքերը ներկայացված են Ε/40/1608-90 առ 02.09.20թ նամակով:

*Ի լրումն, տեղեկացնում ենք, որ մինչ հայտերի բացումն այլ մասնակցի կողմից ստացվել է հարցադրում 1-ին չափաբաժնի վերաբերյալ, մեջբերում եմ՝ 1-ին չափաբաժեում նշված 80*50*5 անկյունակը այլևս չի արտադրվում, դրան փոխարինում է 75*50*5 անկյունակը: Եթե դա բավարարում է ձեր պահանջը կարող ենք դա առաջարկել, և տրամադրվել է պարզաբանում՝ մեջբերում եմ՝ Առաջարկն չի համապատասխանում նախագծին: Պարզաբանման մասին ինֆորմացիան հրապարակելուց հետո (13.08.20թ.) այն հասանելի է ընթացակարգի բոլոր մասնակիցներին, ընդհուպ մինչև հայտերի բացումը՝ 19.08.2020թ., իսկ «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ն հայտերը բեռնել է 18.08.20թ:»:*

3. <u>«Տեխնոսնաբ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.09.2020թ.-ի գրությամբ դիմել է «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13601-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 25.09.2020թ.-ին հրավիրված նիստին:

«Տեխնոսնաբ» ՍՊԸ-ն 19.09.2020թ.-ին էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացված թիվ 15 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Հայկական ասոմայիե էլեկարակայան» ՓԲԸ-ի կողմից հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով ընթացակարգի հետ կապված պատվիրատուն «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Հայտնում ենք, որ նշված գնման ընթացակարգում ներառված երեք չափաբաժինների համար մեք ներկայացրել էինք հայտ, թիվ 1-ին չափաբանժի հետ կապված տեղեկացրել էինք պատվիրատուին, որ 80x50x5 անկյունակ այլևս չի արտադրվում, դրան փոխարինում է 75x50x5 անկյունակը, եթե բավարարում է ձեր պահանջը կարող ենք դա առաջարկել, էլ. հասցեով մեզ պատասխանել են, որ այդ առաջարկը կքնարկվի իրեց կողմից՝ ցավոք մեզ մոտ չի պահպամվել նշված էլեկտրոնային նամակագրությունը, եթե գնումների համակարգում պահպանվել է այդ էլեկտրոնային նամակագրությունը խնդրում ենք այն վերծանել և տրամադրել մեզ, որպիսզի բացահայտվի այս թյուրիմածության պատճառը: Հայտերը բացելուց հետո գնահատող հանձնաժողովը մեր ընկերության մասով որոշում է կայացրել, որ թիվ 1-ին չափաբաժնով մեր ներկայացրած 75x50x5 անկյունակը չի համապատասխանում պահանջվող անկյունակի պարամետրերին՝ 80x50x5 և միաժամանակ հանձնաժողովի նիստի գնման վերաբերյալ ստացված հարցումները և պարզաբանումները բաժնում Պատվիրատուն պարզաբանում է, թե առաջարկը չի համապատասխանում նախագծին, որը չի համապատասխանում մինչ հայտի ներկայացման մեր և Պատվիրատուի էլ. նամակագրությանը: Պարզաբանումների ընթացակարգի ժամանակ Պատվիրատուն պարզ կարող էր պատասխանել, որ 75x50x5 անկյունակը չի համապատասխանում տեխնիկական պահանջներին և մեր կողմից այն իհարկե չէր առաջարկվի, հիմա պարզվում է իրենք մեզ դրդել են առաջարկ ներկայացնել այդ մասով և միաժամանակ մերժել են:

Մենք համաձայն հանձնաժողովի որոշման 1 օրյա ժամկետում ներկայացրեցինք նոր շտկված հավելված 1.1-ը, որում չէինք ներառել թիվ 1 չափաբաժինը, որի հետ կապված նախորոք մենք ներկայացրել էինք, որ նման տեսակի անկյունակներ ներկա պահին չեն արտադրվում:

Պատվիրատուի վերը նշված նախաձեռնությունը հղում անելով «Գնումների մասի» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին մենք համարում ենք անհիմն, մոտեցումը ոչ իրավաչափ և բանսարկու մոտեցում:»:

4. <u>ՍՑ-LO-2020/206 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից մետաղների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ որպես 1-ին չափաբանժի համար նապատեսված տեխնիկական բնութագիր նշվել է՝ 80x50x5, երկարությունը ոչ պակաս 6 մ, ԳOUS 8510 Ст3 ԳOUS 535, կամ համարժեքը:

iii. www.gnumner.am կայքում 13.08.2020թ.-ին հրապարակվել է հրավերի վերաբերյալ տրամադրված պարզաբանումների մասին հայտարարություն, որի համաձայն՝ 11.08.2020թ.-ին ստացվել է հետևյալ հարցադրումը.

*«1-ին չափաբաժնում նշված 80*50*5 անկյունակը այլևս չի արտադրվում, դրան փոխարինում է 75*50*5 անկյունակը: Եթե դա բավարարում է ձեր պահանջը կարող ենք դա առաջարկել:»:*

Ի պատասխան վերոնշյալ հարցամդրման, տրվել է հետևյալ պարզաբանումը.

«Առաջարկն չի համապատասխանում նախագծին»:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ն:

v. Մասնակիցը թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

vi. Մասնակիցը թիվ 1.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով թիվ 1-ին չափաբաժնի համար սահմանված տեխնիկական բնութագրում որպես ապրանքի անվանում նշել է անկյունակ, իսկ տեխնիկական բնութագիր 75x50x5, երկարությունը 6 մ, ԳՕՍՏ 8510-93 Cm3:

vii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.08.2020թ.-ի նիստի թիվ 2.3-րդ արձանագրության համաձայն՝ «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1 չափաբաժնով ներկայացված անկյունակի պարամետրերը՝ 70x50x5 չեն համապատասխանում հրավերով պահանջված անկյունակի պարամետրերին՝ 80x50x5, հետևաբար կիրառելի չեն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար:

viii. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է առաջարկել Մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

ix. Հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի միջոցով 25.08.2020թ.-ին Մասնակցի՝ technosnab-99@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է ծանուցում:

x. Հանձնաժողովի 27.08.2020թ.-ի նիստի թիվ 2.4-րդ արձանագրության համաձայն՝ Հանձժաժողովը, դիտարկելով «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված թիվ 1.1 հավելվածը, արձանագրել է, որ ներկայացված փաստաթղթերով առաջին չափաբաժինը ամբողջությամբ հանվել է հավելված 1.1-ից, ուստի ղեկավարվելով 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, որոշել է Մասնակցի հայտը մերժել:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13601-2020 գրությամբ «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (21.05.2020թ.-ի թիվ 778-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին

անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընթացակարգի Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխա-նությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային

եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից մետաղների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ որպես 1-ին չափաբանժի համար նապատեսված տեխնիկական բնութագիր նշվել է՝ 80x50x5, երկարությունը ոչ պակաս 6 մ, ԳOUS 8510 Cт3 ԳOUS 535, կամ համարժեքը:

www.gnumner.am կայքում 13.08.2020թ.-ին հրապարակվել է հրավերի վերաբերյալ տրամադրված պարզաբանումների մասին հայտարարություն, որի համաձայն՝ 11.08.2020թ.-ին ստացվել է հետևյալ հարցադրումը.

*«1-ին չափաբաժնում նշված 80*50*5 անկյունակը այլևս չի արտադրվում, դրան փոխարինում է 75*50*5 անկյունակը: Եթե դա բավարարում է ձեր պահանջը կարող ենք դա առաջարկել:»:*

Ի պատասխան վերոնշյալ հարցամդրման, տրվել է հետևյալ պարզաբանումը.

«Առաջարկն չի համապատասխանում նախագծին»:

Հանձնաժողովի 24.08.2020թ.-ի նիստի թիվ 2.3-րդ արձանագրության համաձայն՝ «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1 չափաբաժնով ներկայացված անկյունակի պարամետրերը՝ 70x50x5 չեն համապատասխանում հրավերով պահանջված անկյունակի պարամետրերին՝ 80x50x5, հետևաբար կիրառելի չեն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար, ինչով պայմանավորված առաջարկել է Մասնակցին շտկել արձանագրված անհամապատասխանությունը, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարը armeps.am համակարգի միջոցով 25.08.2020թ.-ին Մասնակցի՝ technosnab-99@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկել է ծանուցում: Հանձնաժողովի 27.08.2020թ.-ի նիստի թիվ 2.4-րդ արձանագրության համաձայն՝ Հանձժաժողովը, դիտարկելով «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված շտկված թիվ 1.1 հավելվածը, արձանագրել է, որ ներկայացված

փաստաթղթերով առաջին չափաբաժինը ամբողջությամբ հանվել է հավելված 1.1-ից, ուստի ղեկավարվելով 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով, որոշել է Մասնակցի հայտը մերժել:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործրնթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ

մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ն թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-104/20» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցրել է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպիսի պայմաններում Մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ն Պատվիրատուի կողմից սահմանված ժամանակահատվածում, չշտկելով արձանագրված անհամապատասխանությունները, խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.09.2020թ.-ի թիվ 26/26-1/13601-2020 գրությամբ «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/206 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Տեխնոսնաբ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**